

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (21-րդ տարի)

Այս թիւով.....

Նոյեմբեր 2021 (ԻԹ տարի թիւ 3)

Նոյեմբեր ամսուան բացատրական
բառարան

Էջ 2-5

Տօն՝ Սուրբ Առաքելներու
Անդրեասի եւ Փիլիպպոսի
Յիսնակ

Սուրբ Յովիանէ եւ Վասիլունի

Սուրբ Հրեշտակապետերու
Գաբրիէլի եւ Միքայէլի

Տօն Ընծայման Ս. Աստուածածնի
Եկեղեցական Բառարան

Էջ 5

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Սուրբ
Եկեղեցւոյ Պատարագին

Էջ 6-8

Ծանօթանանք Եկեղեցւոյ Սպասներուն

Էջ 9

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Էջ 10-13

Լուրեր Կիրակնօրեայէն

Էջ 14

Սրբոց Թարգմանչացր՝ Կիրակնօրեայէն
ներս

Էջ 15

«The Armenian Church» Գիրքի
ներկայացում

Էջ 16



Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական
Վարպետ, Ռուբեն Նալբանդյան

Հ... Հրեշտակ

Ամսուան Համարները

«Արդ, ով որ իր անձը այս մանուկին պէս կը խոնարհեցնէ՝ անիկա է մեծը երկինքի արքայութեան
մէջ»: Մատթէոս 18.4

«Զգո՛ւ յշ, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն մէկը. գիտցէք, որ անոնց հրեշտակները երկինքի
մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս»: Մատթէոս 18.10

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

www.sourphagop.org

sh_sourphagop

Նոյեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 6	Տօն՝ Սուրբ Հրեշտակապետերու Գաբրիէլի եւ Միքայէլի
Շբթ. 13	Տօն՝ Սուրբ Առաքեալներու Անդրեասի եւ Փիլիպպոսի
Շբթ. 20	Տօն՝ Ամենայն Սրբոց
Կիր. 21	Սբ. Կոյսի Տաճար Ընծայում
Կիր. 21	Բարեկենդան Յիսնակի Պահոց
Բշ. 22	Ա. օր Յիսնակի Պահոց
Շբթ. 27	Սրբոցն Նիկողայոսի եւ Գրիգորի Սքանչելագործ Հայրապետացն
Բշ. 29	Սբ. Կուսանաց Յովիանէի եւ Վասիլուհիի

Պահքի Օրեր: 3, 5, 10, 12, 17, 19, 22, 23, 24, 25, 26,



Տօն՝ Սուրբ Առաքեալներու Անդրեասի եւ Փիլիպպոսի

Անդրեաս առաքեալը եղբայրն էր Պետրոս առաքեալի, որ իրեն պէս ձկնորս էր: Սկիզբը, Անդրեասը աշակերտած է Ս. Յովհաննէս Մկրտիչին եւ Յիսուսը գտնելէ ետք, անմիջապէս իր եղբայրը Պետրոսը գտած ու ըսած է անոր. «Մեսիան գտանք» (Յովհ. 1.35-42): Ըստ աւանդութեան, Ս. Անդրեաս առաքեալ կը քարոզէ Յունաստանի եւ փոքր Ասիոյ մէջ եւ կը նահատակուի X ձեռով խաչի մահով, Յունաստանի մէջ:

Ամսօրեայ
քաղաքի
զինանշանը

Փիլիպպոս առաքեալը Բեթսայիդայէն էր, Անդրեասի եւ Պետրոսի քաղաքէն: Յիսուս էր որ երբ Գալիլիա գացած ատեն Փիլիպպոսը տեսաւ, անոր ըսաւ. «Հետեւէ՛ ինծի»: Անդրեասն ալ իր կարգին գտաւ Բարթողիմէոսը՝ «Նաթանայէլը» եւ զայն Յիսուսի ներկայացուց (Յովհ. 1.43-51): Ըստ աւանդութեան կը նահատակուի Եփեսոսի մէջ խաչի մահով:

Հայաստանեայց Եկեղեցին Ս. Անդրեասի եւ Ս. Փիլիպպոսի յիշատակը կը տօնէ Խաչի 9-րդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:

Յիսնակ

Յիսնակը, 50 օրերու միջոց մըն է, որուն ընթացքին կը պատրաստուինք տօնելու Յիսուսի ծնունդն ու աստուածայայտնութիւնը, որ տեղի կ'ունենայ Յունուար 6-ին: Յունուար 6-էն 50 օրեր դէպի ետ հաշուելով կը հասնինք Նոյեմբեր 18-ին, հետեւաբար այդ թուականին ամենէն մօտ Կիրակին Յիսնակի Բարեկենդանն է:

Կար ժամանակ, երբ Յիսնակի ամբողջ տեւողութեան պահք կը պահուէր, Ս. Յարութեան նախորդող մեծ պահքին պէս: Սակայն ներկայիս սովորական Չորեքշաբթիի եւ Ուրբաթի պահքերէն զատ երեք շաբաթներու վերածուած է Յիսնակի Պահքը: Առաջին շաբաթը Յիսնակի Պահք, Դեկտեմբերին՝ Ս. Յակոբի պահք, իսկ Յունուարին՝ Ս. Ծննդեան պահք:



Հրեշտակներու քանդակներ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցւոյ ճակատին



Հրեշտակի բարձրաքանդակը Աղթամար վանքի Ս. Խաչ եկեղեցւոյ ճակատին

«Հրեշտակը եւ Ս. Մարիամը» 1330-ի Կիրակոս Աղբակեցիի «Աւետում» մանրանկարը

Ս. Յուլիանէ եւ Վասիլուհի կոյսերու յիշատակութեան օր

Յուլիանէ եւ Վասիլուհի անունով շատ կոյսեր կան Տօնացոյցերու մէջ: Բայց հայկական Տօնացոյցին մէջ յիշատակուողները Նիկումիդիա քաղաքէն են: Ս. Յուլիանէն (†304) մանուկ հասակէն ինքզինք նուիրած է կուսական կեանքին: Դիոկղետիանոս կայսեր հալածանքներու օրերուն մերժած է հեթանոս երիտասարդի մը ամուսնութեան առաջարկը եւ տարուած է դատարան: Երբ բազմաթիւ չարչարանքներէ եւ փորձութիւններէ յետոյ սրբուհին կը հանեն այրելու, խարոյկն ինքն իրեն կը մարի: Սա առիթ կը դառնայ բազմաթիւ ներկաներու դարձին, որոնք նոյն տեղ կը նահատակուին: Իսկ Ս. Յուլիանէն կը գլխատուի 19 տարեկանին: Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Յուլիանէ եւ Վասիլուհի կոյսերու յիշատակը կը տօնէ Յիսնակի Կիրակիին յաջորդող երկուշաբթի օրը:

Ս. Վասիլուհին եւս († 303), որ իննամեայ աղջնակ էր, Դիոկղետիանոս կայսեր հալածանքներու օրերուն կը մատնուի տանջանքներու, սակայն անժաաս դուրս կու գայ փորձութիւններէն առիթ դառնալով իր դատաւորի դարձին:

Սուրբ Հրեշտակապետերու Գաբրիելի եւ Միքայելի Եւ Ողջ Երկնային Զօրքի Յիշատակութեան Օր



Միքայել հրեշտակապետը Իսրայելի ժողովուրդին համար մարտնչելու ընթացքին: Երուսաղէմ, ձեռ. 2027, էջ 4բ, Աստուածաշունչ 1266 թ. Կիլիկիա, ծաղկող Թորոս Ռոսլին

Նոյեմբեր ամսուան առաջին կամ երկրորդ Շաբաթ օրը, Հայց. Եկեղեցին կը յիշատակէ հրեշտակապետեր Գաբրիելի եւ Միքայելի տօնը: Հրեշտակ կը նշանակէ պատգամաւոր, առաքեալ՝ «ղրկուած»: Նախապէս անոր կը տրուէր երկնային դեսպան, պատգամաւոր, եւ կամ սուրհանդակ նշանակութիւնը: Աստուածաշունչը կը վկայէ որ հրեշտակները իբրեւ լուսեղէն՝ ստեղծուած են առաջին օրը, լոյսի հետ միասին: Անոնք ժամանակի ներգործութենէն չեն ազդուիր եւ սեռային յատկանիշներ չունին:

Հայ եկեղեցւոյ հրեշտակաբանութեան համաձայն՝ հրեշտակները անմարմին հոգիներ են. ըմբռնելի, ինքնիշխան, միշտ շարժման մէջ եղող եւ անսեռ: Անոնք անմահ սպասաւորներ են: Ըստ եկեղեցւոյ Սուրբ հայրերուն՝ հրեշտակները իբրեւ լուսեղէն էակներ, ստեղծուած են արարչագործութեան առաջին օրը՝ լոյսի հետ միասին: Աստուծոյ

հրահանգով, անոնք կոչուած են սպասաւորելու մարդ արարածին: Հետեւաբար, անոնք ծառայող հոգիներ են, որոնք երկնաբնակ ըլլալով հանդերձ, իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ երկրաւոր կեանքի ընթացքին: Անոնք կ'աշխատին ժամանակի եւ տարածքի մէջ, մարդու հետ եւ մարդու համար:

Հրեշտակներուն կը կոչեն նաեւ Աստուծոյ պատգամաւորներ, որոնք կ'իրականացնեն Տիրոջ կամքը: Սուրբ Գիրքը կը վկայէ որ անոնք անհամար են: Ըստ Ս. Դիոնիսիոս Արիսպագացիի՝ անոնք ունին իննը դաս՝ Աթոռներ, Քերովբէներ, Սերովբէներ, Տերութիւններ, Զօրութիւններ, Իշխանութիւններ, Պետութիւններ, Հրեշտակապետեր եւ Հրեշտակներ:

Աստուածաշունչին մէջ հրեշտակներու մասին ակնարկութիւնները շատ են: Անոնք կը ներկայացուին իբրեւ բազմաթիւ, մեծագործ եւ զօրաւոր էակներ: Հին Կտակարանին մէջ անոնք Աստուծոյ ներկայացուցիչները կը նկատուին, միջնորդներ հոգեւոր եւ նիւթեղէն աշխարհներուն միջեւ: Անոնք ունին իրենց ղեկավարները որոնցմէ ամենէն աւելի ծանօթ են Գաբրիէլը եւ Միքայէլը: Հին միջնադարեան մանրանկարչութեան մէջ յատկապէս, կը գտնենք Գաբրիէլ հրեշտակապետի պատկերը, Տիրամօր աւետելու ատեն:

Գաբրիէլ անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ այր», բարձրեալի անմիջական պաշտօնեան է, որուն վերապահուած է Տիրոջ վերին խորհուրդները տարածելու շնորհը: Այս հրեշտակապետն էր, որ ուղղարկուած էր Տիրոջ կողմէ Ս. Կոյս Մարիամին, հաղորդելու բարի լուրը՝ իսկ Զաքարիային՝ Ս. Յովհաննէս Մկրտիչի ծննդեան աւետիսը:

Միքայել անունը, որ կը նշանակէ «Ո՞վ է Աստուծոյ նման», երկնաւոր Արքայի փառքի եւ անոր ժողովուրդին պաշտպանութեան համար մարտնչողն է. ան՝ որուն տրուած է կառավարելու եւ թագաւորելու շնորհ: Միքայել հրեշտակապետի անունը, չորս անգամ վկայակոչուած է Ս. Գրքին մէջ: (Դան. 10.13, 12.1, Յուդ. 1.9, Յայտ. 12.7):

Տօն Ընծայման Ս.

Աստուածածնի

Մարիամ դուստրն էր Յովակիմի եւ Աննայի: Աւանդութենէն քաղելով պատմութիւնը, գիտենք որ Աննա ամուլ էր եւ Մարիամ ուխտի զաւակն էր անոնց:

Համաձայն այս ուխտին, երբ Մարիամ երեք տարեկան եղաւ, ծնողքը զայն ընծայեց տաճարին, որպէսզի հոն նուիրեալ այրիներու եւ կոյսերու խնամքին եւ հոգատարութեան ներքեւ՝ Աստուածային պաշտամունքով մեծնայ եւ տաճարին ծառայէ:

Այս ընծայման տօնն է որ մեր օրացոյցին մէջ արձանագրուած է «Տօն Ընծայման Ս. Աստուածածնի երից ամաց ի տաճարն»:

Աստուածամօր երեք տարեկանին տաճար ընծայման տօնը, անփոփոխ կերպով կը կատարուի 21 Նոյեմբերին:



ԱՌԻՆՁԻ Ս. Աստուածածին Եկեղեցին 2000թ


Եկեղեցական Բառարան

Ա ա Աբեղայ Ասորական ծագում ունեցող այս բառը կը նշանակէ առանձին ապրող՝ չամուսնացած: Մեր եկեղեցիէն ներս Աբեղայ կը կոչուին կուսակից քահանաները: Տարբերութիւնը ամուսնացեալ քահանային եւ աբեղային միջեւ հետեւեալն է՝ ձեռնադրութեան օրը, երկոյեան ժամերգութեան ընթացքին, աբեղան յատուկ ուխտ կը կատարէ կուսակից փառալու եւ չամուսնանալու: Ասոր փոխարէն ան կը խոստանայ ամբողջութեամբ նուիրուիլ հոգեւոր ծառայութեան:

Աբել եւ Կայէն Դրախտէն վտարուելէ ետք Ադամն ու Եւան ունեցան երկու որդի: Մեծին կոչեցին Կայէն իսկ փոքրին Աբել: Եղբայրները իրենց ծնողներու հետ սկսան կրել օրուայ հացը վաստակելու ծանրութիւնը: Կայէնը կը զբաղուէր հողագործութեամբ, իսկ Աբելը՝ հովիւ: Հայրական տան մէջ հաստատուած օրէնքի համաձայն՝ անգամ մը Կայէնը Աստուծոյ նուէր մատուցանեց իր մշակած հողի առաջին բերքէն՝ երախայրիքը. իսկ Աբելը՝ զոհաբերեց իր հօտին առաջին ծնածներէն: Տէրը սակայն կը ճանչնար անոնց սիրտերը, գիտէր որ Աբելը իր գառնուկներէն ամենալաւերը ընտրեց մինչդեռ Կայէնը բերքի լաւագոյն մասը պահեց իրեն: Այս պատճառով Աստուած ընդունեց Աբելի զոհաբերութիւնը եւ տուաւ իր բարեհաճութեան նշանը իսկ Կայէնի նուէրին Ան չնայեցաւ: Եւ Կայէնը նախանձէն ու չարութենէն մղուած սպաննեց Աբելը: Աշխարհի մէջ կատարուած առաջին սպաննութիւնն էր այդ: Աստուած անիծեց մարդասպանը եւ Կայէնը իր ողջ կեանքի ընթացքին հանգստութիւն եւ ապահովութիւն չգտաւ:

Բացատրություն՝ Հայց. Առաք. Սուրբ Եկեղեցւոյ Պատարագին «շար. 1»

Վերջերս երբ կը մտածէի Ս. Պատարագի բացատրութեան ներկայացում մը ընել մեր Կիրակնօրեայ Դպրոցի երկրորդականի աշակերտներուն, յիշեցի գրադարանիս մէջ ունեցած եւ ժամանակին մեծ հաճոյքով կարդացած Բերիոյ Թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգեւոր Տեսուչ՝ Գերշ. Տ. Սուրեն Ա. Արք. Գաթարոյեանի «Բացատրություն Ս. պատարագի» բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առք. Եկեղեցւոյ գրքոյկը: Հետեւաբար որպէս հիմ ունենալով այդ գրութիւնը, այս եւ յաջորդող մի քանի թիւերուն մէջ պիտի ներկայացնեմ հոն տրուած բացատրութիւնը, միշտ ի մտի ունենալով յատկապէս մեր դպրոցի երկրորդականի աշակերտները: Թորոս Պապիկեան



Պատարագի խորհուրդին հաստատումը

Հայց. Եկեղեցւոյ եօթը խորհուրդներէն մէկն է սուրբ հաղորդութիւնը որ կը տրուի սուրբ պատարագին ընդմէջէն:

Ան ոգեկոչումն է վերջին ընթրիքի յիշատակին, ուր Յիսուս ինքզինք մատուցեց առաքելներուն՝ ըսելով ըստ Յովհաննէս աւետարանիչին թէ՝ «Ան որ չուտէ իմ մարմնէս եւ չիսմէ իմ արիւնէս՝ չի կրնար յաւիտենական կեանք ժառանգել» Յովհաննու 6.53

Յիսուս իր մարմինն ու արիւնը որպէս փրկութեան երաշխիք տուաւ մարդոց վերջին ընթրիքին, ուր ան հաստատեց մեղսաքաւիչ հաղորդութեան խորհուրդը: Սեղանէն առաւ հացը, օրհնեց, եւ աշակերտներուն տալով ըսաւ «առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմին իմ՝ որ վասն ձեր եւ բազմաց բաշխի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»: Ապա գինիին բաժակը առաւ, օրհնեց, գոհացաւ, եւ աշակերտներուն տալով ըսաւ «Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ՝ նորոյ ուխտի, որ յաղաքս ձեր եւ բազմաց սեղանի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

Աստուածորդին վերոյիշեալ բառերը արտասանելով յաւիտենական ուխտ մը կնքեց իր առաքելներուն հետ, ուխտ մը որ պիտի իմաստաւորուէր իր խաչելութեան խորհուրդով եւ իր իսկ անձին պատարագումով: Քրիստոս աշխարհ եկած էր որպէս միջնորդ հաշտութեան՝ հօր Աստուծոյ եւ աղամական մեղքով այլասերած մարդկութեան միջեւ: Այս նուիրական առաքելութիւնը կ'իրագործուէր փրկագործութեան խորհուրդով: Յիսուս իր մարմինն ու արիւնը որպէս գրաւական կու տար մարդկութեան, ինչպէս Պօղոս առաքեալ հարազատօրէն մեկնաբանելով պիտի ըսէր.

«Միթե չէ՞ք գիտեր, որ ձեր մարմիններուն համար մասանաւոր զին վճարուած է, փառաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն մէջ» Ա. Կորնթացիս 6.19

Ս. Պատարագի խորհուրդով առաջին հերթին մենք կը յիշատակենք Աստուծոյ որդիին մարդեղութեան խորհուրդը. Քրիստոս մարդացաւ, որպէսզի մարդը վերստին բարձրանայ այն պատուանդանին, ուրկէ ինկած էր ան նախաճնողներու մեղանշումէն ետք: Այդ էր Աստուծոյ որդիին առաքելութիւնը եւ այդ առաքելութեան ամբողջացումը պիտի ըլլար, անոր փրկագործութեան խորհուրդը՝ Սուրբ Պատարագումը:

Պատարագը անարիւն զենուժն է Քրիստոսի, փրկագործութեան խորհուրդն է ան, որ կը կատարուի մեր մեղքերու բնաջնջման եւ մեր հոգիներու փրկութեան համար:



Խորհրդաւոր Ընթրիք

Պատարագ՝ զոհ, ընծայ, նուէր

Սուրբ Պատարագի խորհուրդով Քրիստոս որպէս Աստուածային գերազանց սիրոյ արտայայտութիւն ինքզինք կ'ընծայէ, կը զոհուի մեր փրկութեան համար: Ճշմարտօրէն Ս. Պատարագը Աստուծոյ սէրը ներկայացնող Աստուծոյ որդիին զոհաբերութեան խորհուրդն է ուր ամեն անգամ պատարագուող «Գառն Աստուծոյ»-ն իր մարմինն ու արիւնը կու տայ մեղանշական բնութեամբ անկումի ենթակայ մարդուն, որպէս Աստուածային գերազանց սիրոյ արտայայտութիւն:

Ինչպէս վերջին ընթրիքի սեղանին վրայ հացն ու զինին Քրիստոսի օրհնութեամբ փոխակերպուեցան Փրկչին Մարմնոյն ու Արեան, նմանապէս ամեն Ս. Պատարագի խորհուրդին Ս. Սեղան ընծայուող ՆՇԽԱՐՈՒՆ ու ԳԻՆԻՆ նուիրագործուելով ու սրբագործուելով գերահրաշօրէն կը փոխակերպուին եւ հաւատացեալներուն կ'ընծայուին որպէս մեղսաքաւիչ Ս. Հաղորդութիւն, որպէս Մարմին եւ Արիւն Քրիստոսի:

Յովհաննէս Ա. Մանդակունի (հաւանաբար 400-483/84 կամ 498/499), հայոց կաթողիկոս (ըստ որոշ աղբիւրներու՝ 471/472-483/84, ըստ ուրիշներու՝ 485-498/499), վարդապետ եւ հայրապետ, հետեւեալ բառերով կը ներկայացնէ Մեծ եւ Սքանչելի խորհուրդը հաւատացեալներուն:

«Այսուհետև որպէս լոկ հաց մի՛ նայիր անոր, եւ ոչ ալ որպէս գինի նկատի ունեցիր կամ ընդունիր զայն, որովհետև Ս. Խորհուրդին ահաւորութիւնը Թեպէտև անտեսանելի է, սակայն անոր զօրութիւնը իմանալի եւ զգալի:

Մենք ճշմարիտ հաւատքով Քրիստոսն է, որ կ'ընդունինք Ս. Սեղանին վրայ, Անոր է, որ կը մօտենանք, Ձայն կը տեսնենք, կը շօշափենք, կը համբուրենք, կը ճաշակենք զայն ընդունելով մեր ներսիդին եւ կը դառնանք մարմինը, անդամներն ու որդիները Աստուծոյ»
Ճառք, էջ 168:

Յաջորդիւ պիտի ներկայացնենք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնն ու անոր բացատրութիւնը:

Նախ ըսենք, որ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ:


1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում



Գօտի
ԺԸ դար, Կարս
Ս. Էջմիածնի Գանձատուն



Սուրբ սեղանի խաչ
Թ. դար սկիզբ, Ախալցխայ




Կանթեղներ
Ս. Էջմիածնի գանձատուն




Կ ա թ ո դ ի կ ո ս ի ծ ի ս ա կ ա ն
հանդերձանքը
Ս. Էջմիածնի Մայր տաճարի
թանգարան


Ծանոթանանք Եկեղեցւոյ Սպասներուն
Խաչվառ, Աղանի, Բուրվառ



ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ՍԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՊԱՍՆԵՐՈՒՆ



ԽԱՉՎԱՐ



ԱՂԱՆԻ

ԲՈՒՐՎԱՐ

Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամէն մարդ կերաւ այնքան որ ուզեց: Եւ ինչ որ աւելցաւ, տասներկու կողով լեցուց:

Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.14-17 .

հինգ, յիսունական, տասներկու, աչքերը, կշտացան, ձուկը, հացը, կատարեցին

Որովհետեւ շուրջ ----- հազար մարդ կար: Յիսուս
աշակերտներուն ըսաւ.

- Նստեցուցէք զանոնք ----- հոգինոց խումբերով:

Անոնք ----- հրահանգը եւ նստեցուցին բոլորն ալ: Ապա
Յիսուս առաւ հինգ ----- եւ երկու -----, ----- երկինք
բարձրացուց, օրհնեց, կտրեց եւ աշակերտներուն տուաւ որ
բաժնեն ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու -----, եւ
աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝
----- սակառ լեցուցին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք դ. 7

Նոյեմբեր 20-ին:

ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան
Հայրապետին

բ. Ս. Գեորգին

գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոսին

դ. Բոլոր Սուրբերուն

6.- Քանի՞ հատ են Քրիստոսի Սուրբ
Եկեղեցւոյ խորհուրդները:

ա. 1

բ. 3

գ. 7

դ. 12

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք

Ս. Գաբրիէլ եւ Ս. Միքայէլ

Հրեշտակապետերուն տօնը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 9

գ. Նոյեմբեր 7

դ. Նոյեմբեր 27

7.- Ըսէ՛ մէկ բառով. ոսկի բերան
ունեցող:

Ո-----ն

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ

Առաքեալներու՝ Անդրէասի եւ

Փիլիպպոսի տօնը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 13

գ. Նոյեմբեր 20

դ. Նոյեմբեր 16

8.- Գրէ՛ Հրեշտակապետին անունը:

Մ-----

9.- Գրէ՛ Հրեշտակապետին անունը:

Գ-----

4.- Ս. Կոյս Մարիամ քանի՞

տարեկանէն սկսեալ սկսաւ

Տաճարին մէջ ապրիլ:

ա. 3

բ. 12

գ. 20

դ. 7

10.- Ի՞նչ էր Պետրոս Առաքեալին

եղբօրը անունը:

ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան

Հայրապետ

բ. Ս. Փիլիպպոս

գ. Ս. Անդրէաս

դ. Ս. Գրիգոր

5.- Յիսնակը, քանի՞ օրերու միջոց մըն

է:

ա. 6

բ. 13

գ. 50

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք Նոյեմբեր 13-ին:

ա. Ս. Անդրէ Զօրավարին

բ. Ս. Գեորգին

գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոսին

դ. Բոլոր Սուրբերուն

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս.

Կոյսին Տաճար ընծայումը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 13

գ. Նոյեմբեր 21

դ. Նոյեմբեր 29

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ կուսանաց Յուլիանէի եւ Վասիլուհիի տօնը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 22

գ. Նոյեմբեր 23

դ. Նոյեմբեր 29

4.- Այս տարի ե՞րբ է Յիսնակի պահոց բարեկենդանը:

ա. Նոյեմբեր 6

բ. Նոյեմբեր 21

գ. Հոկտեմբեր 20

դ. Հոկտեմբեր 30

5.- Յիսնակի Բարեկենդանը Նոյեմբերի ո՞ր օրուան ամենէն մօտ Կիրակիին կը հանդիպի:

ա. 6

բ. 16

գ. 18

դ. 31

6.- Ո՞ր հրեշտակապետին անունին իմաստը «Աստուծոյ այր» է:

ա. Գաբրիէլ

բ. Միքայէլ

7.- Ամբողջացո՞ւր հրեշտակներուն դասերը:

Ք-----ներ,

Ս-----ներ,

Տ-----ներ

8.- Աստուածաշունչին մէջ ո՞ւր կը կարդանք:

«Զգո՛ւյ՛, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն մէկը. գիտցէք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս»:

Աւետարան ըստ Մ-----սի ---

9.- Յիսուս քանի՞ բորոտներ բժշկեց ըստ Ղուկասի 17.11-19-ին:

ա. 5

բ. 1

գ. 12

դ. 10

10.- Յիսուսի բժշկած բորոտներէն քանի՞ հոգի վերադարձան շնորհակալութիւն յայտնելու:

ա. 5

բ. 1

գ. 12

դ. 10

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Նոյեմբեր 21ին:

ա. Ս. Կոյսի Տաճար ընծայումին

բ. Ա. օր Յիսնակի Պահոց

գ. Ս. Անդրէասի եւ Ս. Փիլիպպոսի

դ. Բոլոր Սուրբերուն

2.- Յիսուսի ո՞ր Առաքելը X ձեռով
խաչի մահով մահացաւ:

ա. Մատթէոս

բ. Թադէոս

գ. Բարթողիմէոս

դ. Անդրէաս

3.- Ամբողջացո՛ւր Պօղոս Առաքելի
գրած նամակներուն ցանկը:

ա. Հռոմայեցիներուն

բ. Ա. եւ Բ. Կ-----ցիներուն

գ. Գ-----ցիներուն

դ. Ե-----ցիներուն

ե. Փ-----ցիներուն

զ. Կ-----ցիներուն

է. Ա. եւ Բ. Թ-----ցիներուն

ը. Ա. եւ Բ. Տ-----սին

թ. Տ-----սին

ժ. Փ-----նին

ժա. Ե-----ցիներուն

4.- Մեր Եկեղեցւոյ 7 խորհուրդներէն
ո՞ր մէկը կը տրուի Ս. Պատարագին
ընդմէջէն:

ա. Մկրտութիւն

բ. Դրոշմ

գ. Ապաշխարութիւն

դ. Հաղորդութիւն

5.- Յիսնակը մեզի ո՞ր տաղաւարին
կը պատրաստէ:

6.- Հայկական տօնացոյցին մէջ
յիշատակուող Ս. Յովիանէ եւ Ս.
Վասիլունի կոյսերը ո՞ր քաղաքէն են:

Ն-----իա

7.- Ս. Հաղորդութեան ընթացքին, Ս.
Սեդան ընծայուող ո՞ր երկու նիւթերը
կը փոխակերպուին Քրիստոսի
Մարմնին ու Արեան:

----- ու -----

8.- Ո՞ր հրեշտակապետին անունին
իմաստը «Աստուծոյ այր» է:

ա. Գաբրիէլ

բ. Միքայէլ

9.- Ամբողջացո՛ւր Ղուկաս 6.31-ի
ոսկեղէն համարը:

Ինչ որ ----- -- -----

ձեզի ----- դուք ալ -----
անոնց:

10.- Ո՞ր հրեշտակապետին անունին
իմաստը «Ո՛վ է Աստուծոյ նման» է:

ա. Գաբրիէլ

բ. Միքայէլ

Լուրեր Կիրակնօրեայէն

3 Հոկտեմբեր 2021՝ Իրենց սովորական ծրագիրին կողքին, աշակերտները սերտեցին Յիսուսի 72 աշակերտներուն տօնը:

17 Հոկտեմբեր 2021 Իւրաքանչիւր դասարան շարունակեց իր տարեկան ծրագիրը եւ նշեց Սուրբ Աւետարանիչներուն տօնը:

24 Հոկտեմբեր 2021՝ Իրենց սովորական դասապահերուն եւ երաժշտութեան պահերուն կողքին, աշակերտները սերտեցին Գիւտ Խաչի տօնը:



Սրբոց Թարգմանչացը Կիրակնօրեայէն ներս

Կիրակի՝ 10 Հոկտեմբեր 2021 Սրբոց Թարգմանչաց տօնը ուսումնասիրելէ ետք, իւրաքանչիւր դասարան անցաւ իր ծրագիրին, որուն կը միանայ նաեւ երգեցողութեան պահերը: Սրբոց Թարգմանչաց տօնին առիթով իւրաքանչիւր աշակերտ հայերէն գիրք մը կը ստանայ որպէս նուէր: Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները ստրվեցան Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց խօսքերը թէ.

«Առանց մեսրոպեան ոճով մարդակերտումի, խախուտ են բոլոր կերտուածքները մեր ազգային կեանքին, ինչպէս խախուտ են աւագահիմն ու հողաշէն կառոյցները աշխարհի...»:

«Հայ Գիրքը միտո՞ւն է մեր ժողովուրդի զաւակներուն համար: Ան, որ Հայ Գիրք կը կարդայ, կը միտոնուի հայութեամբ»:



“The Armenian Church” Գիրքի ներկայացում

Շաբաթ, 30 Հոկտեմբեր 2021-ի երեկոյան 6.30-8.00, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ մէջ ներկայացուեցաւ Արամ Ա. Կաթողիկոսի «The Armenian Church»-ը: Ձեռնարկը կազմակերպուած էր եկեղեցույ Կիրակնօրեային կողմէ:

Բացման խօսքը կատարեց պրն. Առէն Պապիկեան: Գիրքը ներկայացուց պրն. Միւր Պանքեան: Գիրքէն հատուած մը ընթերցեց պրն. Հրակ Պանքեան: Ձեռնարկի աւարտին իւրաքանչիւր ներկայի գիրքէն օրինակ մը նուէր տրուեցաւ:

Ձեռնարկը կը վայելէր Օրհնութիւնը Առաջնորդ սրբազանին, եւ հովանաւորութիւնը տ. եւ տիկ. Բաֆֆի եւ Փօլա Աշգարեանի: Հովանաւորութիւնը ստանձնուած էր ի յիշատակ Աշգարեան նուիրատուներու զակին՝ Քրիստաֆըրի:

